

# ՄԱՍԼՈՅ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով «Չարթոնք» պիտի ունենայ միջոցառում արձակուրդ:

Մեր յաջորդ թիվը Երեքշաբթի, 18 Օգոստոս 2015-ին:

# ՉԱՐԹՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN  
77րդ Տարի, թիվ 177 (21,418)  
ՀԱՐԱԹ, 15 ՕԳՈՍՏՈՍ 2015  
Հարտոնկ جريدة سياسية أرمنية  
4 էջ 1000 L.N.

1915-2015  
Հայոց Ցեղասպանության 100-րդ տարեկից  
Remember and Demand  
Je me souviens et j'exige  
أتذكر وأطالب

## Լիբանանյան Լուրեր Հրգպալայի Ընդհանուր Քարտուղար Հասան Նասրալայի Դեմ Ձերբակալման Հրամանագիր Արձակելու Կոչ

Արաբական Միացյալ Եմիրություններու Տուգայի նախկին ոստիկանապետ Տահի Խալֆան կոչ ուղղեց՝ ձերբակալման միջազգային հրամանագիր հրապարակել Հրգպալայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալայի դեմ: Անոր համաձայն Ինթերփոլի կողմէ նման հրամանագիր մը հրապարակելու կողքին՝ Տոցի երկիրներ պետք է կազմեն հետապնդող խմբակ մը, օրինական միջոցներով ձերբակալելու համար Նասրալայն: Խալֆան նշեց, որ Հրգպալայի ընդհանուր քարտուղարը պիտի շարունակէ իր ոճիրները եթէ չձերբակալուի:

Ի միջի այլոց երկ յետմիջօրէին, Նասրալայ հեռաձայնով ելոյթ մը ունեցաւ «Յուլիսի Պատերազմ»-ի աւարտին 9րդ տարեդարձին կամ այսպէս կոչուած՝ «Աստուածային Յաղթանակ»-ին նուիրուած ժողովրդային ձեռնարկի մը ընթացքին, որուն նորութիւնը այն եղաւ, որ ան կոչ ուղղեց Օգոստոս 14ը յաղթանակի ամենամեայ մնայուն օր հռչակել՝ Մայիս 25 «Ազատագրում»-ի օրուն նման: Նասրալայի խօսքին մնացեալ մասը իր հերթական ելոյթներուն գրեթէ միեւնոյն բովանդակութիւնը կը կրէ:



## Պրորի Տեսակցեցաւ ՄԱԿի Ներկայացուցիչներուն Հետ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորի տեսակցեցաւ՝ ՄԱԿի Մարդասիրական օգնութիւններու գործակալութեան ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սթիվն Օպրայէնի հետ, ներկայութեամբ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Սիլվիոյ Զակի: Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Լիբանան ապաստանած սուրիացի գաղթականներու թղթածրարները: Օպրայէն տեսակցութեանն էտք յայտարարեց, որ իրենց ունեցած են դրական քննարկում՝ գաղթականներուն օգնութիւններ ներկայացնելու միջոցներուն մասին:

## «Աղբերու Կուտակումը Առողջութեան Կը Վնասէ» Ալան Հաքիմ

Տնտեսութեան նախարար Ալան Հաքիմ այցելեց Պէյրութի նահանգապետ եւ ստուգեց ցորենի ամբարները: Մեկնաբանելով նահանգապետի տարածքին աղբ թափելու երեւոյթը Հաքիմ յայտարարեց, որ աղբերը սկսած են կուտակուիլ պետական ենթակառուցումներուն մօտ, ուստի անհրաժեշտ է վիճակը ճշդել: «Աղբերու երեւոյթը սկսած է ժխտականօրէն ազդել մարդոց առողջութեան վրայ: Կառավարութեան նիստի ընթացքին օրակարգային թղթածրարները սառած են, սակայն աղբերու հարցը պետք է շուտով լուծուի, որովհետեւ բացառիկ խնդիր մըն է», ըսաւ նախարարը: Անոր համաձայն աղբերը արտածելը կամ ժամանակաւոր աղբակոյտներ գնտելը՝ տազակապի միակ լուծումն է: Բաղաբացիակալ անվտանգութեան ծառայութիւնը հերքեց՝ Տորայի շրջանին մէջ հրթիռի բռնկման մասին տարածուած տեղեկութիւնները, իսկ Թրիփոլի մէջ քաղաքացիներ բողոքի հաւաք մը կազմակերպեցին՝ մեծելու քաղաքի վարչական շրջաններուն մէջ աղբ թափելու երեւոյթը: Նախապէս տեղեկութիւններ նշած էին, որ հրդեհ մը բռնկած է Տորա-Զարաթի քաղաքին մէջ:

## Ֆուատ Սինիրա Ընդունեց Իսլամական Մաքաւտ Կազմակերպութեան Եւ Սալիտաթ Ճապալ Հանդիպումի Ներկայացուցիչները

Կրօնական ազատութիւններու Պէյրութի յայտարարութեան հրապարակումէն ետք, նախկին վարչապետ Ֆուատ Սինիրա

իր գրասենեակին մէջ ընդունեց Իսլամական Մաքաւտ կազմակերպութեան եւ Սալիտաթ Ճապալ հանդիպումի ներկայացուցիչները: Տեսակցութեան ընթացքին քննարկուեցաւ նշեալ յայտարարութիւնը: Ժողովականները շնորհակալութիւն յայտնեցին նախկին վարչապետին՝ այսպիսի կարեւոր հանդիպում մը կազմակերպելու համար: Համաձայնութիւն գոյացած է շարունակելու խորհրդակցութիւնները, Մաքաւտի եւ Սալիտաթ Ճապալի միջեւ՝ յանուն ազգային համագոյակցութեան եւ միասնական աշխատանքի զարգացումին: Ժողովականները նաեւ վերահաստատեցին, որ Լիբանանի քրիստոնէականներն ու մահմետականները յանձնառու կը մասնակցեն աշխատանքներու ուղեգրման:

## «Մուսաբալալ Ամբաստանողները Հետեւանքները Պիտի Կրեն» Ահմատ Հարիրի

Մուսաբալալ հոսանքի ընդհանուր քարտուղար Ահմատ Հարիրի յայտարարեց, որ Մուսաբալալ հոսանքին հետ յարաբերական ամբաստանում պահանջողը սխալած է իր հասցեին մէջ: Պեքայի մէջ կազմակերպուած ընթերթի մը ընթացքին Հարիրի յայտարարեց, որ հոսանքին դէմ յարաբերական ամբաստանութիւններ արձակողները պիտի կրեն իրենց գրապարտութիւններուն հետեւանքները: Նշեց, որ ընդհանուր քարտուղարը շարք մը տեսակցութիւններ ունեցաւ արեւմտեան Պեքայի եւ Ռաշայայի շրջաններուն մէջ:

## Ապտոլ Մուսաբալալի Համաձայն Լիբանան Խոչընդոտումի Կ'ուղղուի

Մարմակերպութեան եւ երիտասարդութեան նախարար Ապտոլ Մուսաբալալ Հաննաուի յայտարարեց, որ կառավարութեան վերջին նիստի ընթացքին տեղի ունեցած են յարաբերական քննարկումներ: «Մենք դեպի խոչընդոտում կ'ուղղուինք: Բոլորը կը գիտակցին, թէ այս կառավարութեան գոյատեւումը կարեւոր է, այլապէս երկրին մէջ պիտի տիրէ սահմանադրական ամբողջական դատարկութիւն: Վարչապետին համբերութիւնը տակաւին չէ հատած եւ ան սոր նիստի թուական պիտի ճշդէ», ըսաւ Հաննաուի: Իսկ մշակոյթի նախարար Ռոնի Արաւժի յայտարարեց, որ նախարարութիւնները պիտի չկարենան վճարել Սեպտեմբերի աշխատավարձերը, եթէ Ֆինանսաւորումի որոշումները չկատարուին:

## Շրջանային Լուրեր Թուրքիա Կը Փորձէ Համախոհական Կառավարութիւն Մը Կազմել

Թուրքիոյ Արդարութիւն եւ Չարգացում կուսակցութեան ղեկավար վարչապետ Ահմատ Տաւուտօղլու, ընդդիմադիր ժողովուրդի Հանրապետական կուսակցութեան ղեկավարին հետ վճռական հանդիպումէն ետք, մամուլը ասուլիսով մը անդրադարձաւ համախոհական կառավարութեան կազմելու բանակցութիւններուն հարցին: Ան նշեց, որ իրենք վճռական են երկիրը առանց կառավարութեան չձգելու համար քանք ներդնելու հարցով, սակայն բանակցութիւնները ընդդիմադիր ժողովուրդի Հանրապետական կուսակցութեան հետ արդիւնք չեն տուած:

Տաւուտօղլու ընդգծեց, որ այժմ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու կայացումը չափազանց հաւանական է: «Մեր երկրի մնայուն կայունութեան համար բոլոր միջոցները փորձել է յետոյ, դարձեալ ժողովուրդի կամքի արտայայտութեան դիմելու հաւանականութիւնը շատ մեծցած է եւ նոյնիսկ կրնանք ըսել, որ այդ մէջ միակ տարբերակ դարձած է», ըսաւ Տաւուտօղլու: Յիշեցնեց, որ երկրին մէջ խորհրդարանական ընտրութիւնները տեղի ունեցած էին Յունիս 7ին:

## Սուրիոյ Ընդդիմադիր Ազգային Համախմբումի Նախագահը Մոսկուայի Մէջ

Սուրիոյ ընդդիմադիր Ազգային համախմբումի նախագահ Խալիտ Խոժա, Մոսկուայի մէջ ունեցած տեսակցութիւններէն ետք յայտարարեց, որ իրենք ռուսական կողմին հետ քննարկած են Սուրիոյ հակամարտութիւնը եւ հաւանական լուծումները: Խոժայի համաձայն Ասատ որեւէ դեր չունի ապագայ Սուրիոյ մէջ: «Որպէս համախմբում չենք կրնար վարչակարգին միանալ՝ Իսլամական պետութիւն կազմակերպութեան դէմ պայքարելու համար, որովհետեւ վարչակարգը մէկ մասնիկն է այդ կազմակերպութեան», ըսաւ Խոժա: «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը հարդրեց, որ Սուրիոյ Չապատանի քաղա-

քին մէջ կռուող կողմերը համաձայնած են՝ Չինոպոլիսը երկարաժամկէտ միջոցով Կիրակի օր: Սուրիոյ մէջ վերջին ժամերուն տեղի ունեցած բախումներուն ընթացքին սպաննուած է՝ Հրգպալայի անդամներէն Հասան Ահմատ Սալուսը: Մարդկային իրանաց Սուրիական խորհուրդին համաձայն, մեծ պայքար մը տեղի ունեցած է Հալէպի հիւսիսային հատուածին մէջ, իսկ բախումներ քաղաքի արեւելեան գիւղական շրջաններուն մէջ: Միւս կողմէ ընդդիմադիր ազատ բանակի պատասխանատուներէն Իպրահիմ ժիպալուի յայտարարեց, որ Թուրքիոյ հետ սահմաններուն վրայ ապահով գոտի հաստատել այլեւս անհրաժեշտ է:

## Լուրեր Արաբական Աշխարհէն Եմենի Մէջ Հուսիներ Պարտութեան Կը Մատնուին

Առնուազն 13 Հուսիներ սպաննուեցան եւ քանի մը ուրիշներ վիրաւորուեցան, երբ Արաբական դաշինքի ռազմական օդանավեր յարձակումներ գործեցին Եմենի Հուսիսային շրջանին վրայ: Ծովեզերեայ այդ քաղաքն դեպի հարաւ ուղարկուած փոխանակում տեղի ունեցաւ՝ արաբական ռազմականներուն եւ Հուսի գինեալներուն միջեւ: Եմենի կառավարութեան բանբերը յայտարարեց, որ բա-

նակն ու ազգային դիմադրութիւնը ազատագրած են գաւառներու մեծամասնութիւնը եւ կը ձգտին տիրապետելու նաեւ մայրաքաղաք Սանաային ու Իլիսիային Օմրան եւ Սաատա գաւառներուն: Իսկ նախագահ Ապտոլ Ռապո Մանսուր Հատիի բանբերը յայտարարեց, որ կարգ մը քաղաքներէն Հուսիներուն նահանջը ցոյց կու տայ, որ անոնք պարտութեան կ'ենթարկուին:

## Հայաստանի Կառավարութիւնը 30 Միլիոն Տոլարով Կը Վաճառէ Մարգահամերգային Համալիրը

ՀՀ կառավարութիւնը իր վերջին նիստին ընթացքին որոշեց՝ պաշտպանութեան նախարարութեան «Կարեն Տեմիրճեանի անուան մարգահամերգային համալիր»-ի ամրացում եւ Հայաստանի սեփականութիւնը հանդիսացող գոյքը վերստանձնել եւ սեփականաշնորհել:



Ռոշուեցաւ, որ ուղղակի վաճառքի ձեւով սեփականաշնորհման ենթակայ անշարժ գոյքի վաճառքի գինը 30 միլիոն տոլարին համարժէք դրամ է: Գնորդը «ՆՏԱԿ ինվեսթմենթ կորպ» ընկերութիւնն է:

Ընկերութիւնը պարտաւոր է վեց ամիս ժամկետով եւ առնուազն 55 հազար դրամ նուազագոյն աշխատավարձով աշխատանքային պայմանագիր կնքել՝ Մարգահամերգային համալիրին մէջ փաստացի աշխատող 99 աշխատողի հետ, պահպանել «Կարեն Տեմիրճեանի անուան մարգահամերգային համալիր» անուանումը, պահպանել մարգամշակութային համալիրի օգտագործման ուղղուածութիւնը, 10 տարուան ընթացքին իրաքանչիւր տարի ապահովել՝ Հայաստանի կառավարութեան դիմումով համապատասխան նշանակութիւն ունեցող մինչեւ 5 ձեռնարկ, բայց ոչ անելի քան տարեկան 12 օր տեւողութեամբ, անվճար կազմակերպումը, համալիրի տարածքին մէջ քաղաքացիներուն համար ապահովել ճիծեռնակաբերդ այցելելու անարգել ու անվճար իրաւունք՝ հողատարածքի նկատմամբ սեփականութեան իրաւունք ձեռք բերելու պարագային:

Կառավարութիւնը նաեւ համաձայն գտնուած է ընկերութեան ներդրումային ծրագիրին: «ՆՏԱԿ ինվեսթմենթ կորպ»-ը նպատակ ունի Մարգահամերգային համալիրի ձեռքբերման եւ յարակից տարածքի կառուցապատման միջոցով իրականացնել հսկայ ներդրումային ծրագիր՝ նորոգել Մարգահամերգային համալիրի շէնքը, իրականացնել կառուցապատում եւ ստեղծել ընտանեկան ուղղուածութեան համալիր կեդրոն, որ իր տեսակին մէջ առաջինը պիտի ըլլայ ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ շրջանին մէջ: Այդ մէկը պիտի ներառէ պանդոկներ, փակ ջրաշխարհ, համերգային սրահներ, հանդիպումներու սրահներ, ճաշարաններ, խանութներ եւ խաղատուն:

Ծրագիրի իրականացումը նախատեսուած է եկող չորս տարուան ընթացքին, ընդհանուր ծախսը՝ ներդրումներուն չափը, պիտի գերազանցէ 100 միլիոն տոլարը: Պիտի ստեղծուի առնուազն 250 աշխատատեղ:

## Ստեփանակերտի ԹՈՒՄՕ Կեդրոնը Պիտի Սկսի Գործել Սեպտեմբերին

Արցախի Հանրապետութեան վարչապետ Արա Յարութիւնեան՝ «Ղարաբաղ Թելեքոմ» ընկերութեան բաժնետիրոջ ներկայացուցիչ Ռալֆ Երիկեանի հետ, 13 Օգոստոսին այցելած է Ստեփանակերտի ԹՈՒՄՕ կեդրոն՝ ծանօթանալու հին տեղի ունեցող շինարարական աշխատանքներուն:



Շրջելով կեդրոնի սենեակներուն մէջ՝ վարչապետը իր գոհունակութիւնը յայտնած է աստարուած աշխատանքին վերաբերեալ եւ համապատասխան պատշոնատարներու տուած է Սոր յանձնարարականներ, որպէսզի ուսումնական կեդրոնը կարելի ըլլայ օգտագործել Սեպտեմբերին:

Շէնքին աւարտին մօտեցող վերակառուցման համար «Ղարաբաղ Թելեքոմ»-ը յատկացուցած է շուրջ 150 միլիոն դրամ, իսկ սարքաւորումները ձեռք բերուած են Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ներդրումով: Ըստ պատասխանատուներու՝ գեկուցումներուն՝ Ստեփանակերտի ԹՈՒՄՕ կեդրոն կրնան յաճախել Արցախի 500է անելի 7-17 տարեկան երախաները՝ տարբեր շրջաններէ:



# Մ Ե Կ Ի Կ Ի Ը

Հայաստանից դուրս հրատարակված էի միջին կարգի մի երեկոյթի, որտեղ հանդիպեցի մի շատ գեր, մազվզուտ, կարճահասակ մարդու՝ աչքի ճեղքի հաստ ճկոյթին գմբեթարդ անդամակալում ծանր մատանիով, որը խիստ ընդգծում էր նրան ճեղքի բռնած երկարոտ ու սլացիկ շամպայնի նուրբ բաժակի հարեանությունից: Ամառույ կեսին թունոտ կանաչ գոյնի թանձր պիչակով էր՝ ողջ կուրծքը մինչև պիչակի փեշերը զարդարած մետալներով՝ էլ հորեմանցի, էլ Մաշտոց, էլ Գոշ, էլ "Հայրենիքի մատուցած ծառայությունների համար" (երեք մետալ), էլ ՀՀ Պաշտպանության նախարարության, էլ ՀՀ Սշակոյթի նախարարության, նաև գանազան յուշամետալներ...: Ներքեից վեր նայելով՝ մարդը մի նիհար ու բարձրահասակ գեղեցկուհու ներկայացնում էր իր պիչակին ամրացրած մետալներն ու շքանշանները: Ձախ կողմից միմեանց կողքի կախումած էին Առաջին եւ Երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանները, դրանց տակ՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանը: Դրանց տակ կախում էին "Արիության մետալը", "Մարտական ծառայության մետալը", "Մխիթար Գոշի մետալը", "Մխիթար Հերացու մետալը", "Անանիա Շիրակացու մետալը", "Մովսես Խորենացու մետալը", "Տիգրան Մեծի", "Վարդան Մամիկոնեանի" շքանշաններ, ապա՝ Պատուոյ շքանշանը, Հայրենիքի մատուցած ծառայությունների համար մետալը, Արիության մետալը, Հասարակական կարգի գերագանց պահպանման համար մետալը:

Վարդան Մամիկոնեանին զուգահեռ, նույն հորիզոնականում էր ԼՂՀ Գրիգոր Լուսաւորչի շքանշանը: Այն շատ տիրական բազմել էր գեր փորձի մի փոքր վեր, ճիշտ ստամոքսի վրայ, եւ Գր. Լուսաւորչի վեր բարձրացած աջ կարծես հաստատում էր մարդու՝ պիչակի աչք ու ձախ կողմերի շքանշանները կրելու բոլոր իրաւունքները:

Պիչակի ձախ "փեշին" վերից վար ԼՂՀ շքանշաններն ու մետալներն էին՝ ԼՂՀ Մարտական խաչի Առաջին եւ Երկրորդ աստիճանների, առակազար Այգեկուսի դեմքով Անանիա Շիրակացու մետալը, ապա պարսիկի դեմքով Վաչագան Բարեպաշտի մետալն էր, որի վրայի Վաչագանը կարծես մի փոքր ամաչում էր: Յետոյ հերթով գալիս էին Մխիթար Գոշի, Մարտական ծառայության, Շուշիի ազատագրման համար, Արիության համար, Երախտագիտության մետալները:

Գոտկատեղից ներքե կայրած էին ՀՀ եւ ԼՂՀ "Վաստակաւոր" եւ "Ժողովրդական" պատուաւոր կոչումները հաստատող երկուական շքանշանները՝ ընդամենը չորս հատ, եւ մնում էր զարմանալ այս ժուժկալ համեստության համար՝ ինչպէս է, որ այս մարդը բաւարարուել է ընդամենը չորս հատով, երբ "Վաստակաւոր" եւ "Ժողովրդական" պատուաւոր կոչումները աչք ու ձախ բռնող էին բաժանում: Բայց ոչ, պարզուեք, որ դրանք փակցնելու տեղ չի եղել. "Մտածում էի՝ թիկունքից փակցնել, բայց յետոյ հասկացայ, որ տեսնողը չի հասկանալու ինչ մետալներն են", շամպայնի երկու կումերի արտաբերած բացատրեց շքանշանների տիրակալը:

- Իսկ ահա այս մետալը ինչի՞ համար էք ստացել,- ակնածանքով հարցրեց երկարոտ գեղեցկուհին՝ նուրբ մատիկով հպուելով "Հասարակական կարգի գերագանց պահպանման համար" համեստ մետալին:

-Օ, դա շատ կարեւոր մետալ է, այդ մետալից ես շատ ունեմ, հասարակական կարգի պահպանության համար է: Հասարակական կարգը ես խստօրէն պահպանել եմ Հայաստանի բոլոր իշխանութիւնների համար՝ Լեւոն Տեր Պետրոսեանի, Ռուբեն Զոհարեանի, Սերժ Սարգսեանի: Դա հայրենի իշխանութիւնների բոլոր տեսակի բոմժերից ու թափփուկներից պաշտպանելու եւ հաւատարիմ ծառայելուս վկայական է:

-Միթէ Հայաստանում իշխանութիւնների համար բոմժերից ու թափփուկներից պաշտպանուելու կարիք կա՞յ:

-Ի հարկէ, շատ կայ: Մեր երկրում բնակչութեան ութուն տոկոսը բոմժեր ու թափփուկներ են...տէ, Հայաստանը աղքատների երկիր է:

-Աղքատներից էք պաշտպանել՞:  
-Այն էլ ինչպէ՞ս:  
-Իսկ այս մարդն ո՞վ է: Սա կարծես թէ նույն մարդն է, չէ՞: Երկու տարբեր մետալների վրայ,- մատը դնում է Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանի վրայ:

-Այո, նույն մարդն է՝ Մեսրոպ Մաշտոցը: Մէկը Հայաստանի մետալն է, միւսը՝ Ղարաբաղի:

-Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը:  
-Մեսրոպ Մաշտոցը... (յապաղում է, օգնութիւն հայցող հայեացքով աչք ու ձախ է նայում, ապա վճռական) հերոս է:

-Ի՞նչ հերոսութիւն է արել:  
-Տէ, հերոս է (կրկին աչք ու ձախ է նայում, այտերը մի պահ կախ են ընկնում, կարծես ուզում է յիշել) ... հայերին փրկել է Յեղասպանութիւնից:

-Փրկել է՞: Ինչպէ՞ս է փրկել: Եթէ փրկել է՝ ինչպէս է Յեղասպանութիւնը եղել՞:

-Յեղասպանութիւնը փրկել է՝ այսինքն Յեղասպանութեան ժամանակ շատերին է փրկել:

-Օ, շատերին է փրկել: Նաեւ աղքատներին՞:  
-Այո, դժբախտաբար:

-Իսկ իրեն հետ ի՞նչ եղաւ յետոյ:  
-Ո՞ւմ հետ: Մեսրոպ Մաշտոցի՞: Մահացել է ի հարկէ (ձեռքը դնելով կողք կողքի կախումած Մխիթար Գոշի ու Մխիթար Հերացու մետալների կողմը՝ այ մարդ, կրակն ընկայ, հիմի էլ կը հարցնի՞՝ որակը ովքեր են):

-Որտե՞ր: Ինչի՞ց:  
-Ես ինչ իմանալ ինչից: Դա ինձ չէր բարեբողբան է: Իմ գործը իշխանութիւններին փրկելն էր: Ես իմ գործն էի անում: Տէ էդ մարդն էլ ծերացել է մահացել է:

-Այս բոլոր մետալները իշխանութիւններին աղքատներից փրկելու համար էք ստացել՞:  
-Այո, այո, աղքատներից փրկելու համար:

-Իսկ այս մետալների մօտ ի՞նչ լեզուով է գրուած:  
-Հայերէն: Հայերէն է գրուած: Սրանք Հայաստանի եւ Ղարաբաղի մետալներ են, պարզ է, որ հայերէն են գրուած:

-Ի՞նչ տառերով:  
-Հայերէն տառերով: Չ՞էք տեսնում՞ հայերէն տառեր են: Ահա տեսէք՝ հայերէն տառերով գրուած է՝ Գրիգոր Ս. Լուսաւորիչ:

-Հայերէն տառերով...: Գրիգոր Ս. Լուսաւորիչ...: Ո՞վ է Գրիգոր Ս.Լուսաւորիչը:  
- Գրիգոր Ս. Լուսաւորիչը Գրիգոր Ս. Լուսաւորիչն է: Լուսաւոր մարդ է: Իշխանութիւն է:

-Նրան էլ էք փրկել՞:  
-Չէ, նա էլ է վաղուց մահացել: Նրան ուրիշներն են փրկել:

-Երբ: Ովքեր են փրկել: Ինչի՞ց են փրկել:  
-Ինձ նման մարդիկ: Միշտ էլ ինձ նման մարդիկ են փրկում: Գուցէ պապս է նրան փրկել, ես ի՞նչ իմանամ:

-Իսկ այս տառերը... այս հայերէն տառերը... այս տառերը երբուանի՞ց էք օգտագործում:  
-Սրա՞նք: Հայերէն տառերը: Վաղուց, շատ վաղուց: Հարիւր տարուց աւելի է:

-Այսքան շատ մետալ Դուք աղքատների դէմ կռուելուց էք ստացել՞:  
-Տա շատ դժուար գործ է: Ոստիկանները գնում են՝ մարդկանց իրենց ընտանիքի հետ իրենց տնից հանում են, փողոց են գցում, այդ մարդիկ էլ կատաղած գալիս են իշխանութիւնների դէմ: Աղքատացած, գազանացած...:

Թշնամի են փաստօրէն: Այդ ներքին թշնամիների դէմ պայքարելն աւելի դժուար է, քան արտաքին թշնամիների: Կեանքս անցաւ դրանց դէմ կռուելով: Երբ որ ինձ կենեալի կոչում տուեցին, դրանք ես յիսուն ասեմ՝ Դուք հարիւր հասկացեք, մի վիճակով կանգնել՝ բողոքում էին: Քար էին շարտում վրաս: Մի անգամ նոյնիսկ քարը գլխիս կպաւ: Հո չէի կատաղեալ...: Չէին թողնում գործս անեմ:

Յատուկ վտանգաւոր պայմաններում եմ աշխատում (ժպտում է, դէմքը լուսաւորում է, փորն աւելի է մեծանում, Գրիգոր Ս. Լուսաւորիչ մետալը վեր ու վար է անում՝ Լուսաւորչի աջը սպառնալի թելում է առաջ): Տէ, մեր Հայրենիքն է, պաշտպանել է պետք այդ բոլոր բոմժերից...: Ձեր կենացը գեղեցկուհի, եկէք Հայաստան, եկէք Լեւոնային Ղարաբաղ, բաժակը բարձրացնում է՝ աչք ճեղքի ճկոյթի ադամանակալու մատանու փայլն ընդգծում է, -դուք փրկուելու չուէք Հայաստանում, երաշխաւորում եմ՝ ոչ մի աղքատ չէք տեսնի: Մեսրոպ Մաշտոցի շքանշան կը տանք...: Մի հատ էլ եկեղեցի կը կառուցենք եւ Ձեր անունով կը կոչենք: Եկեղեցու "բացումն" էլ "փակ" կ'անենք: "Փակ բացումները" իմ նեղ մասնագիտացումն է (ձեռքը դնելով անկիրք խոժոժուած Գրիգոր Ս. Լուսաւորիչ մետալին, վարից վեր վաւաշտ նայելով՝ անյաջող փորձ է անում նրբագեղ խոնարհուելու):

# Համացանցի Մէջ Յանախ Դժուար Ե Զանազանել Իրողութիւնը Կեղծիքէն

Զարմանալի է, որ ժամանակակից գիտարեստի մեր դարուն եւ ելեկտրոնային սարքերու միջոցով բոլորին տրամադրութեան տակ եղած տեղեկատուութեան յորձանուտի մէջ, աւելի ու աւելի դժուար է, իսկ երբեմն ալ անհնարին, իրողութիւնը տարբերել կեղծիքէն:

Համացանցը իւրաքանչիւր նիւթի վերաբերեալ իր անասիման հնարաւորութիւններով, կրնայ օրհնութիւն կամ անձեք ըլլալ, երբ որեւէ մէկը կը փորձէ պարզել այս կամ այն յօդուածի իսկութիւնը:

Հնարաւոր չէ իմանալ՝ արդեօք կարողացածը ճշմարիտ է, թէ՛ շինծու, եթէ ընթերցողը տուեալ նիւթի գծով մասնագետ չէ կամ չի ստուգեր truthorfiction.comի կամ snopes.comի նման կայքեր՝ բամբասանքը իրականութենէն տարբերելու համար:

Ահա այդպիսի ապատեղեկատուութեան երկու թարմ օրինակներ, որոնք տարածուած էին համացանցի մէջ միլիոնաւոր հայերու եւ այլոց շրջանակէն ներս:

Առաջին յօդուածը իբր թէ The Moscow Times կայքէն, վերնագրուած էր. «Ռուսիոյ նախագահը թուրք դեսպանին. «Ըսէք Ձեր բռնակալ նախագահին, որ անոր ԻՊի ահաբեկիչներու հետ միասին դժոխք կ'ուրարկէմ. Սուրիան մեծ Ստալինկրատի կը վերածեմ անոր համար...»: Այս յօդուածը շրջանառուեցաւ աշխարհով մէկ, տեղադրուեցաւ հազարաւոր կայքէջերու մէջ եւ արտատպուեցաւ անհամար թերթերու կողմէ:

Յղում կատարուած էր նախագահ Փութինին, որ Ռուսկոյայի մէջ Թուրքիոյ դեսպան Ռուիթ Եարտըմիս իբր թէ քսած է, որ Ռուսիան իր դիւանագիտական յարաբերութիւնները Թուրքիոյ հետ պիտի խզէ՝ եթէ Էրտողան իր աջակցութիւնը Սուրիոյ մէջ ԻՊի ահաբեկիչներուն անմիջապէս չդադրեցնէ: Յօդուածին մէջ կը մէջբերուէր «արտահոսած տեղեկութիւն... երկու ժամ տեւած դռնփակ հանդիպումէն», որուն ընթացքին Փութինը Թուրքիոյ նախագահը անուանած էր «կեղծուոր» եւ սպառնացած Սուրիան վերածել «մեծ Ստալինկրատի Էրտողանի եւ Սեւուական Արաբիոյ դաշնակիցներու համար», գոր ան համեմատած է Հիթլերի հետ:

Ես բազմաթիւ հայերէ ելեկտրոնային փոստով ստացայ այս կեղծ յօդուածի մի քանի տասնեակ պատճեններ՝ «կեցցէ Փութինը», «վերջապէս մէկը համարձակեցաւ Էրտողանը իր տեղը դնել» բացականչութիւններով: Յոգնեցուցիչ էր բոլորին պատասխանել, որ անիկա կեղծ լուր էր...:

Ընթերցողները եւ նոյնիսկ թերթերու խմբագիրները ըստ երեւոյթին, իրենք իրենք ներութիւն չէին տուած ստուգելու, որ նման յօդուած չկար The Moscow Times կայքէջի մէջ: Նաեւ կը թուէր, որ ոչ ոք չէր գարմացած, թէ ինչպէս կրնար ռուսական թերթը նախագահ Փութինի ազգանունը սխալմամբ ներկայացնել իբրեւ «Փութին»:

Ապատեղեկատուութեան երկրորդ օրինակը կը վերաբերի աշխարհահռչակ երգչուհի Պէյոնսէին, որ իբր երգած է Հայոց Յեղասպանութեան յիշատակը երգի տեսահոլովակը, որ կը սկսի «Հայոց Յեղասպանութիւն, 1915 Ապրիլ 24» գրութեամբ, «Եւրօիւրպ»ի մէջ տեղադրուեցաւ 2015 Ապրիլ 24-ին մէկու մը կողմէն՝ «Եսկոսամօ» կեղծանունով: Ապա տեսահոլովակը կը ցուցարդէ «Երբեք չմոռնալ» բառերը կամ կարմիրով, որուն կը յաջորդեն նկարներ՝ Երեւանի մէջ Հայոց Յեղասպանութեան յուշահամալիր այցելած մարդոց: Յաջորդ չորս վայրկեաններուն պատուանդին վրայ կ'երեւին երեք զինուած թուրք զինուորներ, որոնք կը սպաննեն ամբողջ հայ ընտանիք մը եւ կ'անուանեն խումբ մը երիտասարդ հայուհիներ: Տեսահոլովակը երգը կ'արարտին վառ կարմիր գոյնով գրուած «Ապրիլ 1915» բառերով՝ այն պահուն, երբ թուրք զինուորը ատրճանակով ուղղակի կը կրակէ հայ տղու գլխուն...:

Հազարաւոր հայեր հաւանաբար խաբուած էին կարծելով, որ Պէյոնսէի երգը իրօք նուիրած էր Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակին: Տեսահոլովակի յղումը շնորհակալական հարիւրաւոր մեկնաբանութիւններով տեղադրուեցաւ անթիւ ու անհամար Ֆէյսբուքի մտնուած էջերու եւ «Եւրօիւրպ»ի մէջ: Ես միայն անցեալ շաբաթ իմացայ այս երգի մասին: Սկիզբը քիչ մը վատ կը զգայի, որ թերթի խմբագիր ըլլալով Հայոց Յեղասպանութեան մասին այսպիսի կարեւոր երգ մը կը լսեմ՝ անոր թողարկումէն ամիսներ անց: Ստուգեցի երգի բառերը եւ շատ արագ յայտնաբերեցի, որ ան բացարձակապէս կապ չունի հայերու կամ Հայոց Յեղասպանութեան հետ: Երգչուհին անընդհատ կը կրկնէր. «Ես այստեղ էի, ես ապրեցայ, ես սիրեցի, ես այստեղ էի...»: «Հայ, Յեղասպանութիւն կամ Թուրքիա» բառերը երգին մէջ գոյութիւն չունին...:

Ի վերջոյ հասկցայ, որ մէկը վերցուցած էր Պէյոնսէի երգը եւ անոր աւելցուցած էր պատկերներ Հայոց Յեղասպանութեան մասին պատմող ֆիլմէն: Ցաւօք շատ հայեր հիացած էին, որ աշխարհահռչակ երգչուհին տեսահոլովակ թողարկած էր Հայոց Յեղասպանութեան մասին...:

Ես կախարդական բանաձեւ չունիմ, թէ ինչպէս կարելի է գանազանել իրողութիւնը կեղծիքէն՝ համացանցի մէջ տեղադրուած իւրաքանչիւր նիւթի համար: Հաւանաբար օգտակար ըլլայ յիշել յայտնի ամերիկեան ասացուածքը. «Եթէ բան մը անհաւատալի է իսկական ըլլալու համար, ապա հաւանաբար իսկական չէ...»: Ընթերցողները պետք է թերահաւատութեան առողջ չափաբաժին ունենան, առանց ծայրայեղութիւններու մէջ մտնելու՝ չըլլալով կամ չափազանց կասկածամիտ ամէն ինչին հաւատալու հարցի մէջ կամ չափազանց դիւրահաւատ՝ կուրօրէն ընդունելու ամէն ինչ...:

**ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ**  
«Զալիֆորնիա Զուրիքը» թերթի իրատարակիչ եւ խմբագիր

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՅՍՕՐ

**ՆՈՒՐՂ ԶԱՐԵԱՆ**

Մեր թուականէն 98 տարիներ առաջ ծնած է հայ քանդակագործուհի Նուարդ Զարեան:

Ն. Զարեան հայ գրող Կոստան Զարեանի եւ անոր տիկնոջ՝ դաշնակահարուհի Թագուհի Ծահնակաբեկի դուստրն ու ճարտարապետութեան պատմաբան Արմէն Զարեանի ցոյրն է: Անոր նկարչական հետաքրքրութիւնները սկսած են 17 տարեկանին: Ուսումը ստացած է Միլանի «Scuola Di Brera» ակադեմիական ուսումնարանը, ապա աւարտած է Վենետիկի «Liceo Artistico»-ի դասընթացները: Զանդակագործ Ատուֆ Վիտի խորհուրդով ձգելով նկարչութիւնը անցած է քանդակագործութեան, սորվելով Հռոմի գեղեցիկ արուեստներու ակադեմիային մէջ, ուր աշակերտած է շարք մը մեծ քանդակագործներու: 1935-1940 տարիներուն սորված է Վենետիկի գեղարուեստի ակադեմիային մէջ: 1950ին խումբ մը նշանաւոր իտալացի արուեստագետներու հետ մասնակցած է՝ Իտալիոյ կառավարութեան յայտարարած մեծ մրցոյթին, որուն առաջնութիւնը շահած է իր ստեղծած կայարանի խճանկարի համար: 1951ին Իրանի կառավարութեան պատուելով Նուարդ Զարեան ստեղծած է՝ Իրանի շահ Ռզա Փաիլիկի դիմանկարը, նախատեսուած անոր դամբարանին համար:

Ն. Զարեան 1965էն սկսեալ դասաւանդած է Հռոմի գեղարուեստի դպրոցին մէջ: Անոր առաջին անհատական ցուցահանդէսը տեղի ունեցած է 1946ին, «Cortile» պատկերասրահին մէջ: Երկրորդը 1950ին «Galleria Dello Zodiaco»-ի մէջ, ուր ներկայացուցած է 18 քանդակ, փայտագործութիւն եւ գծանկար: Այլ ցուցահանդէսներ ունեցած է Հռոմի, Վիեննայի, Երեւանի եւ այլ քաղաքներու մէջ: 1964ին իր գործերէն 25 հատ նուիրած է Հայաստանի Ազգային Պատկերասրահին:

Ն. Զարեանի քանդակներէն են «Մայրութիւն», «Արեւին Նայող Կինը», «Նստած Կինը» եւ այլ գործեր:

Մահացած է Իտալիա 31 Յունուար 2005ին:



# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - 100 ԱՄԵՆԿ

## 100 Մեթր Երկարությամբ Եռագույնը Նեմրուքի Բարձունքին

Հայոց Ցեղասպանության խորհուրդը կրող 100 մեթր երկարություն ունեցող եռագույն ծածկանաձև է Նեմրուքի բարձունքին՝ հին հայկական սրբավայրի մեջ: Այս մասին կը յայտնե «Հայերն Այսօր»-ը:



Օգոստոս 12ին հնագույն հայկական Ամանորի տոնի՝ Նաւ սարդի առիթով (Օգոստոս 11), Հայոց Ցեղասպանության խորհուրդը կրող եռագույնը ծածկանեցաւ նաեւ՝ Նեմրուք լեռան

բարձունքին գտնուող հայ աստուածներու յուշարձանախումբէն կազմուած հին հայկական սրբավայրի մեջ: Այս մասին ըստ «Հայերն Այսօր»-ի կը յայտնե Արցախեան ազատամարտի մասնակից, ֆոթոլրագրող, «Տիգրան Մեծ» բարեգործական հիմնադրամի նախագահ Սրապիոն Գեորգեանը, որ նաեւ 100 մեթր երկայնք ունեցող եռագույնի հեղինակն է:

Օգոստոս 12ի առաւօտեան հայ զբօսաշրջիկներէն կազմուած ուխտաւորներու խումբը սկսած է նուաճել լեռան բարձունքը, որմէ ետք հնագոյն հայկական սրբավայրի շուրջ պարզելով Հայոց Ցեղասպանության խորհուրդը կրող դրօշը, շրջան կազմած է եւ 100 վայրկեան լուրջությամբ յարգած է Ցեղասպանության անմեղ զոհերու յիշատակը:

Օգոստոս 11ին «Տիգրան Մեծ» հիմնադրամը յաջողած է եռագույնը ծածկանել նաեւ՝ պատմական Հայաստանի Մեծ Հայքի Մոկք նահանգի Միջա գաւառի մէջ, Սարիխաչ լեռան հարաւ-արեւմտեան լանջին, Ապարանէն Մուրք հաչ վանքի խաչքարերու շուրջ, որոնք իրենց 12-14 թոն կշիռով եւ 6 մեթր բարձրությամբ ոչ միայն աշխարհի ամենամեծ խաչքարերն են, այլ նաեւ հայ ազգի երբեմնի հօգը ուժի վկան:

Նշուած նախաձեռնութիւնները հնարաւոր եղած է իրականացնել «Ախթամար թուր» գործակալության աջակցության շնորհիւ:

# ՄՃԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳՆԵՔ

## Շուշիի Մէջ Պիտի Կայանայ Ամունքի Համահայկական Չորրորդ Փառատօնը

ՀՀ Սփիւռքի նախարարության, ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության եւ «Աւան Շուշի Փլազա» հիւրանոցի նախաձեռնությամբ ու աջակցությամբ, Շուշիի մէջ Օգոստոս 17-21 պիտի իրականացուի՝ ամունքի համահայկական 4րդ փառատօնը, որ նուիրուած է Հայոց Ցեղասպանության 100րդ տարելիցին: Այս մասին կը հաղորդէ ՀՀ Սփիւռքի նախարարության մամուլի գրասենեակը:

Փառատօնին պիտի մասնակցին 61 ամունքողներ Հայաստանէն եւ Սփիւռքէն (ԱՄՆ, Լիբանան, Ուքրանիա, Պելաճուս) նաեւ 42 ամունքողներ Արցախէն:


Փառատօնի ծիրէն ներս մասնակիցները պիտի այցելեն Արցախի տեսարժան վայրեր:



# ՔԱՂՈՒԱԾ-ՔՆԵՐ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԷՆ

## Դիլիջանը Հայկական Չուիցերիա է The Huffington Post

Հայաստանի աշխոյժ մայրաքաղաք Երեւանէն դէպի հիւսիս-արեւելք շուրջ 90 քմ. անցնելով՝ մայրուղին կը նեղնայ վերածուելով լեռնային ճանապարհի: Դուք կը հասնիք Տաւուշի մարզ, որ յայտնի է հանգստավայրային Դիլիջան քաղաքով: Արտասովոր տաք եւ խոնարհ ամառը կը ստիպէ «հայկական Չուիցերիա» ուղեւորուի հանգստա-ցողներու ոչ միայն ամբողջ երկրէն, այլեւ Կրասնանէն, Ռուսիայէն եւ Իրանէն, ինչպէս նաեւ Եւրոպայի տարբեր երկրներէ: Այս մասին ըստ NEWS.am-ի՝ «The Huffington Post»-ի մէջ հրատարակուած յօդուածին մէջ գրած է մարքեթինկի եւ PR-ի մասնագետ Ճէյ Արահամեան:



«Հակառակ անոր, որ Դիլիջանը այսօր անտարբերութեան մատնուած է, վերջին շրջանին այստեղ բացուած ճաշարանները, «գիշերակաց եւ նախաճաշ» տիպի իջեւանատունները, հիւրանոցները եւ նոյնիսկ հիւրանոցային ցանցերը, օրինակ՝ «Best Western»-ը, կը գարդարեն լանտշաֆթը՝ անկակալիքով, որ ինչպէս շատերը յոյս ունին, անոնք Դիլիջանին այդքան սպասուած աշխուժութիւն կը բերեն:

Տեսնական վերածնունդի հսկայական ծրագիրներով ձեռնբերեցներն ու մեկնասները նպատակ ունին Դիլիջանը վերածել կրթական, մշակութային, ժամանակի եւ ֆինանսական կեդրոնի ամբողջ տարածաշրջանի համար», գրած է ան:

## Վանի Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցւոյ Պատարագը Կրնայ Չեղեալ Համարուիլ



Թուրքիոյ արեւելեան եւ հարաւարեւելեան շրջաններուն մէջ վերջերս տեղի ունեցող ռազմական գործողութիւններուն պատճառով, մեծապէս տուժած է տարածքի զբօսաշրջութիւնը: Թուրքիոյ մէջ տիրող վտանգաւոր մթնոլորտը իր բացասական ազդեցութիւնը կ'ունենայ նաեւէ պատմական Հայաստանի զբօսաշրջութեան համար մեծ հետաքրքրութիւն ներկայացնող վայրերուն վրայ: Այս մասին կը յայտնե ermeniheberg, լուրը փոխանցելով «Թուրքիէ Կազեթասի»-էն: Թրքական «Թուրքիէ Կազեթասի» թերթը գրած է, թէ մասնաւորապէս Վան քաղաքին մէջ, ուր պանդոկները մշտապէս 90 տոկոսով յաճախորդներ կ'ունենան, զբօսաշրջիկներու կողմէ գրեթէ բոլոր ամրագումները ջնջուած են միւս կողմէ:

Վանի զբօսաշրջութեան միութեան նախագահ Ապտուլլահ Թունճտմիթի Նշած է, թէ ռազմական գործողութիւններուն պատճառով, զբօսաշրջային գործակալութիւններու բոլոր ծրագիրները տակնուվրայ եղած են:

Վանի Աղթամար կղզիի Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ, ամեն տարի Սեպտեմբերի երկրորդ Կիրակի օրը մատուցուող Ս. պատարագը, նուազ ուխտաւորներ ունենալու կամ ընդհանրապէս չեղեալ համարուելու հաւանականութիւնը կը դիմագրաւէ: Նոյն աղբիւրին համաձայն՝ պատարագին մասնակցելու համար արտերկրէ Վան ժամանելու ցանկացող բազմաթիւ անհատներ եւ զբօսաշրջիկներու խումբեր՝ ապահովական նկատառումներով ջնջած են իրենց ծրագիրները:

# ՍՈՒՐԻԱԿՆԵՐ ՕՐԱԳԻՐ

## Գետնուղիի Պայթում Հալէպի Մէջ Եւ Հրթիռ Համիտիէի Մէջ Կայ Հայ Վիրաւոր մը

12 Օգոստոսի կէսօրուան ժամերուն, Մայսալուն շրջանին մէջ պայթեցաւ գետնուղի մը, որուն հետեւանքով քաղաքի ուժ-գին կերպով ցնցուեցաւ, ապա յարձակում գործուեցաւ շրջանի պետական հիւանդանոցին վրայ: Սուրիական բանակը ետ մղեց յարձակումը: Այս մասին կը յայտնե Գանձասարի facebook-ի էջը: Նոյն օրը Հալէպի Համիտիէ շրջանի Համալսարան տանող Մարտի փոխադրակառքի մը վրայ ինկած հրթիռին պատճառով, վիրաւորուած է տարբեր հայորդի մը՝ Կարպիս Հապէշեան: Ենթահան հիւանդանոցն է եւ բարեբախտաբար անոր վիճակը մտահոգիչ չէ:

Սուրիոյ Թրիստոնեայ Բնակչութեան Գրեթէ Կեսը Գաղթած է Երկրէն

«Օգնութիւն աղէտեալ եկեղեցիներուն» միջազգային բարեգործական կազմակերպութեան ներկայացուցիչ ճոն Նիլսոնի խօսքերով՝ մօտ 700 հազար քրիստոնեայ ստիպուած եղած է հեռանալու երկրէն, Ինթերֆաքս-ի փոխանցմամբ կը գրէ The Christian Post կայքը: «Սուրիոյ մէջ 1,75 մլն քրիստոնեայ կ'ապրէր մինչ պատերազմը: Առիկ կը նշանակէ, որ սուրիացի քրիստոնեաներու մօտ 40%ը մեկնած է», յայտարարած է ան: Մասնաւորաբար քրիստոնեաներով բնակեցուած Մաալուլա գիւղին մէջ, նախկին 3 հազար բնակիչներէն մնացած է միայն քանի մը հարիւրը: Այս գիւղին մէջ կը գտնուին հնագոյն քրիստոնեական եկեղեցիները, իսկ անոր բնակիչները կը խօսին գրեթէ անհետացած արամեերէնով, որով խօսած է Յիսուսը: 2013ին գրոհայինները գրեթէ ամբողջով քանջեցին վանական քոյրերը, որոնք յետոյ ազատ արձակուեցան: Ըստ Նիլսոնի Իրաքի մէջ մօտ 120 հազար քրիստոնեաներ հեռացած են իրենց տուններէն, որոնցմէ շատերը մեկնած են երկրէն:

Վերջին տարիներու պատերազմական գործողութիւններու պատճառով՝ Սուրիոյ քրիստոնեայ բնակչութեան (որոնք շարքին տոկոսային աւելի կամ նուազ չափով նաեւ Սուրիահայր-թեան) գրեթէ կեսը գաղթած է երկրէն:

# Մարզական

## ՊԵՆՏԱՆՈՒՄԻՆՑ ԱՆՈՑԵԱՆՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ ՏԻՆԱՍՕ ՄԻՆԱՔԸ ՅԱՂԹԵՅ ՊԱԹԵ-ԻՆ

Պելաճուսի ֆութպոլի ախոյեանութեան 15-րդ հանգրուանին կայացաւ գագաթի մրցումը Պորիսով քաղաքին մէջ առաջատար «ՊԱԹԵ»-ին եւ երկրորդ դիրքը գրաւող Մինսքի «Տինամօ»-ին միջեւ: Յաղթանակ տարաւ «Տինամօ»-ն Կլէպ Ռասաոյի միակ կողով: Հայաստանի հաւաքականի անդամ Արթուր Ետիկարեան մնաց պահեստայիններու նստարանին վրայ: Խումբին մարզիչն է սերպ Ռուք ՌաշոՎիչը: Խումբը լաւ արդիւնքներ կ'արձանագրէ նաեւ Իւրոք Լիկի մրցումներուն: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները:

- Շախտիոր Սալիկորսք - Սլաւա Մագիր 6-1,
- Մինսք - Տինամօ Պրեսթ 2-1,
- Դասաւորում.
- 1-ՊԱԹԵ 38 կետ, 2-Տինամօ Մինսք 33 կետ, 3-Շախտիոր 19 կետ.

## ՎԱԼՊՈՒՆԵԱՆ ՄԻԱՑԱՒ ԼԻՈՆԻ ՕԼԻՄՓԻԵՆ

Ֆրանսայի հաւաքականի եւ Մոսկուայի «Տինամօ»-ի կիսապաշտպան Մաթիէ Վալպուեան (31 տարեկան) երեք տարուան համաձայնագիր կնքեց Լիոնի «Օլիմպիք»-ին հետ: Համաձայնագրին արժէքն է 7 միլիոն եւրօ:

## ՌՈՍԱՆ ԻՐԵՆ ԿԸ ՄԻԱՅՆԵ ՆՈՐ ՍԱՐԶԻԿՆԵՐ

Իտալիոյ զօրաւոր խումբերէն «Ռոմա»-ն իր շարքերը զօրացուց երկու նոր մարզիկներով: «Մանչեսթըր Սիթի»-էն պոստիացի յարձակող Ետին Ծեքօ մէկ տարուան համար միացաւ իտալական խումբին: Իսկ Պրազիլի «Ֆլումինենս» խումբի կիսապաշտպան Շերսոնը յայտնեց թէ պիտի միանայ իտալական խումբին:

ՊՈՒԿԱՐԻՆՑ ՍԻԻԲԸՐ ԲԱԺԱԿ  
- Լուսովորեց - Չեքոսլովակիա 0-1,

ԿԻՊՐՈՍԻ ՍԻԻԲԸՐ ԲԱԺԱԿ  
- ԱՓՕԷԼ - Էլ Ի Էլ Լիմասոլ 0-0, տուգան.3-4

ՍՈՒՐՈՒԿԱ ՊԵՆԵԻ ԱՆՈՑԵԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՎԸՐ ՓԼԵՅՅ ՅԱՂԹԵՅ  
- Կամպ Օգաքա (Ճաքոն) - Ռիվըր Փլէյթ (Արժանքին) 0-3, կողեր.Սանչէզ 8րդ, Մերքասո 31րդ, Մարթինէզ 61րդ:

## ՇԱԲԱԹԱՎԵՐԶԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ստորեւ տեսնել շաբաթավերջի մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

ԿԻՐԱԿԻ 16 ՕԳՈՍՏՈՍ 2015	ԺԱՄ
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Բանանց (7) - Ալաշկերտ (3)	16:00
Արարատ (1) - Փիւնիկ (4)	16:30
<b>ԳԵՐՄԱՆԻՆՑ Ա. ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Վոլֆսպուրկ - Այնթապա Ֆրանսֆորթ	16:30
Շթուրկարթ - Բեռլին	18:30
<b>ԱՆԳԼԻՆՑ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Քրիսթի Փալաս (3) - Արսենալ (19)	15:30
Մանչեսթըր Սիթի (1) - Չելսի (8)	18:00
<b>ՖՐԱՆՍԱՅԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Ռեմս (4) - Օլիմպիկ Մարսել (19)	15:00
Լորիան (10) - Պարիս (2)	18:00
Փարի Սեն Ժերմէն (8) - Կազէլէք Աժաքսի (9)	22:00
<b>ԻՏԱԼԻՆՑ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Ուտինտէ - Նովարա (Գ.Դաս.)	19:30
Քարպի (Բ.Դաս.) - Լիվորնո (Բ.Դաս.)	21:30
Թորինօ - Փեսքարա (Բ.Դաս.)	22:15
<b>ՓՈՐՊՈՒԿԱԼԻ Ա. ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Ունիաօ Մատեյրա - Մարիթիմօ	18:00
Պենֆիլա - Եսթրիլ	22:30
<b>ՌՈՒՄԻՆԻՑ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Լոնդոնի Մ. (3) - Թերեք Կրոկի (13)	13:30
Տինամօ Մ. (7) - Ուրալ Եքսք. (9)	17:00
<b>ՀՈՒՆԴԱՏԱՅԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Փի Ես Կի Այնտիվըն (9) - Կրոնիկըն (10)	13:30
Քամպուր (7) - Ֆեյենուրտ Ռոզըրտամ (4)	15:30
<b>ԱՐՄԵՆԻԱ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Լանուս (13) - Եսթուիանթե (11)	02:30
Սան Լորենցօ (1) - Զորուստ Տէլ Նորթ (28)	22:00
<b>ՊՐԱՅԻԼ 19-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Սաօ Փաուլօ (4) - Կոյաս (18)	03:00
Փայմէրյաս (8) - Ֆլամենկօ (12)	17:00
Ավայ (16) - Զորիթիլընկ (1)	22:00
<b>ԱՄՆ-Ի ԱՆՈՑԵԱՆՈՒԹՅԱՆ</b>	
Տալաս (3) - Լոս Անճելըս Կալաքսի (2)	04:00
Ռեալ Սոլթ Լէյք (8) - Փորթլէստ Թիմալըզ (5)	05:00

ԹԵՆԻՍԻ ՍՈՒՐԵԱԼԻ ՄԱՍՑԸՐԸ  
Ժամը 01:30 էն սկսեալ:

## ԵՐԿՈՒՄԵՐԹԻ 17 ՕԳՈՍՏՈՍ 2015

ՍՊԱՆԻՆՑ ՍԻԻԲԸՐ ԲԱԺԱԿԻ ԴԱՐՁ	ԺԱՄ
Պարսելուս - Աթլէթիք Պիլկասօ	23:00
<b>ԱՆԳԼԻՆՑ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Լիվըրպուլ (6) - Պրիմըք (14)	22:00
<b>ԻՏԱԼԻՆՑ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Քրեմօ Վերուս - Սալերնիթանա (Գ.Դաս.)	20:00
Միլան - Փերուճիա (Բ.Դաս.)	22:00
<b>ՌՈՒՄԻՆՑ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Մորտովիա Սարանսք (11) - Ուֆա (14)	19:00
<b>ԱՐՄԵՆԻԱ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ</b>	
Արսենալ (29) - Պրքա Ճիւնիդըզ (2)	03:30
Ռիվըր Փլէյթ (3) - Սան Մարթին Սան Խուան (14)	00:00



**ՎԱՀԱՆ ԹԷՔԵՆԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**  
Յալտաբարու թիւն

**2015-2016 Կրթական Տարեշրջան**

- Վերամուտ**  
2015-2016 կրթական տարեշրջանը պիտի սկսի երեք Հանգրուաններով:  
ա. Միջնակարգ Գ. (Պրէօլէ) Հինգշաբթի, 10 Սեպտեմբերին:  
բ. Միջնակարգ (7-րդ, 8-րդ) եւ Նախակրթարան՝ Հինգշաբթի, 24 Սեպտեմբերին:  
գ. Մանկապարտէզ՝ Ուրբաթ, 25 Սեպտեմբերին:
- 2015-2016 տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները պիտի շարունակուի Չորեքշաբթի, 9 Սեպտեմբերէն մինչեւ Չորեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2015, դարձեալ առաւօտեան ժամը 9:00-1:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:
- Նորեկ աշակերտներ պարտին իրենց հետ բերել.  
ա. Նախորդ դպրոցի վիճակագրոյցը  
բ. Անձնաթուղթի լուսապատճէն  
գ. ք լուսանկար  
դ. Նախորդ վարժարանի վաւերացուած պետական թիւ  
ե. Բժշկական տետրակը
- Վերաքննութիւնները տեղի պիտի ունենան երեքշաբթի, 1 (Լեզուներ եւ Ընկերային գիտութիւն) եւ Չորեքշաբթի, 2 Սեպտեմբերին (Ուսողութիւն եւ Գիտական նիւթեր) առաւօտեան ժամը 8:00-ին:
- Ամրան շրջանին, Տնօրէնութեան կրնաք դիմել ամբողջ Յուլիս ամսուան երեքշաբթի օրերը, կ.ա. ժամը 9:00-1:00: Գրասենեակները փակ պիտի մնան ամբողջ Օգոստոսի ընթացքին:
- Նորութիւն**  
ա) 2015-2016 տարեշրջանին վարժարանին նորութիւնը կ'ընդգրկէ օտար հպատակութիւն ունեցող աշակերտները զեցք մնալու լիբանանեան կրթական ծրագրէն: Հետեւաբար, անոնք պետական քննութիւն չեն անցընէր: (Յաւելի մանրամասնութեան համար դիմել վարժարանի քարտուղարութեան):  
բ) Մանկամտրը բաց է եւ կ'ընդունի 1.5 տարեկանէն սկսեալ փոքրիկներ առաւօտեան ժամը 7:30-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 2:30 կամ մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00 (յատուկ համաձայնութեամբ):

**Տնօրէնութիւն**

**ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ ԵՒ ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ**

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւոր շուրջով պիտի կշռուի Ա. Աստուածածնի Վերափոխման տօնը եւ կատարուի Պիքֆայայի Ա. Աստուածածնի Վանքին ուխտագնացութիւնը:  
Այս առիթով, ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուխտի Օրուան ժամանակացոյցը.-

**Ուրբաթ 14 Օգոստոս**  
Աղի օրհնութիւն եւ ոչխարներու զենում, առաւօտեան ժամը 11.00-ին:  
Աջահամբոյր, առաւօտեան ժամը 11.30-12.00:  
Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:  
Հսկում, երեկոյեան ժամը 7.00-ին:  
Երգահանդես, երեկոյեան ժամը 8.00-ին:

**Շաբաթ 15 Օգոստոս**  
Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 7.00-ին:  
Երեկոյեան ժամերգութիւն, կ.ե. ժամը 5.00-ին:  
Հանդիսաւոր Ա. եւ Անմահ Պատարագ, երեկոյեան ժամը 8.00-ին:

**Պիտի պատարագէ՝**  
**ԳԵՐՇ. Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ**  
Առաջնորդ Ֆրանսայի Հայոց Թեմի

Արարողութեան պիտի նախագահէ եւ ժողովուրդին իր Հայրապետական պատգամը փոխանցէ՝

**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Յընթացս Ա. եւ Անմահ Պատարագին, տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրհնութիւն:

**Կիրակի 16 Օգոստոս**  
Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ա. եւ Անմահ Պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱԶՆԵՐԱՆ**

Յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի տեղի պիտի ունենայ խաղողի եւ արարողութիւն:

**Երկուշաբթի 17 Օգոստոս «Յիշատակ Մեռելոց»**  
Պիքֆայայի Ա. Աստուածածնի մատրան մէջ տեղի պիտի ունենայ Ա. եւ Անմահ Պատարագ եւ հոգեհանգիստ ազգիս համօրէն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ:

**Կ Ա Ր Ե Ի Ր**  
Անոնք որոնք կը փափաքին մատաղու ոչխար կամ խաղող նուիրել Ուխտի Օրուան առիթով, պէտք է ամենուրեք Ուրբաթ, 14 Օգոստոս 2015-ի կէսօրին, իրենց նուիրելը յանձնեն Անթիլիասի կամ Պիքֆայայի Վանքը:  
Հեռ: Անթիլիաս 04-410001 - Պիքֆայա 04-983634:

**Ա.ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆ ԵՒ ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ ԵՒ ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ**

Ուրախութեամբ կը յայտնենք մեր եկեղեցւոյ ծխական ժողովուրդին եւ մանաւանդ այն հաւատացեալներուն, որոնք բարձրացած են Ֆարայայի, Հարաժեյի, Ֆէթրուսի, Աշքուրի եւ Զըսրուանի շրջակայից հովոցները. թէ Կիրակի 16 Օգոստոս 2015ին Ա.Աստուածածնի Վերափոխման տօնին առիթով. Սուրբ եւ Անմահ Պատարագ պիտի մատուցուի, ապա խաղողօրհնէքի արարողութիւն պիտի կատարուի:

Պիտի պատարագէ շրջանի հովիւ  
**Արժ.Տեր Խաչիկ Ա. քիւյ. Միսիրեան**

Սկիզբ Ա.Պատարագի կէսօր ժամը 12.15  
Խաղողօրհնէք ժամը 1.30

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ Պատարագին եւ հաղորդուելու օրուան Սուրբ խորհուրդով:

**ՇԱՆՕԹ**  
Անոնք որոնք կը փափաքին ըստ աւանդութեան խաղող ընծայաբերել, թող բարեհաճին մինչեւ ժամը 1.00 յանձնել խաղողները եկեղեցւոյ դրան մօտ հիրընկալող տիկնանց յանձնախումբին կամ թաղական խորհուրդի անդամներուն: Իսկ անոնք որոնք փափաքը ունին իրենց սիրեցեալ ննջեցեալներուն համար «Տեր Ողորմեա» խնդրել, պարտին մինչեւ ժամը 12:00 ներկայ գտնուիլ եկեղեցի եւ արձանագրել ննջեցեալներու անունները:

**Թաղական Խորհուրդ  
Ծիւնիկ Ա. Յարութիւն Եկեղեցւոյ**

**Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆ ԵՒ ՈՒԽՏԻ ՕՐ ՊԻՔՖԱՅԱՅԻ**

Սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնին եւ Պիքֆայայի Վանքի Ուխտի Օրուան առիթով, սիրով կը հրաւիրենք Լիբանանահայութիւնը, Շաբաթ, 15 Օգոստոս 2015-ի երեկոյեան, մասնակից դառնալու Պիքֆայայի վանքի շրջակայի մէջ տեղի ունենայից հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագին:

Հանդիսաւոր այս առիթով, արարողութեան պիտի նախագահէ եւ մեր ժողովուրդին իր Հայրական պատգամը փոխանցէ՝

**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Պատարագի ընթացքին, պիտի կատարուի խաղողի եւ մատաղի օրհնութիւն:

Տօնական այս առիթով, դէպի Պիքֆայա մեր հաւատացեալ ժողովուրդի պիտի ուղարկուի խաղողի խաղողի, մասնաւոր փոխադրակառքեր տրամադրելի պիտի ըլլան հետեւեալ վայրերուն մէջ:

- \* Ա. Վարդանանց եկեղեցւոյ դիմաց
- \* Ա. Աստուածածնի եկեղեցւոյ դիմաց
- \* Ա. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ դիմաց
- \* Ա. Յակոբ եկեղեցւոյ դիմաց
- \* Ֆանար՝ ակումբին առջեւ
- \* Ռատուա (Էլիան)
- \* Ա. Սարգիս եկեղեցւոյ կից
- \* Չալքա ակումբին կից
- \* Անթիլիաս՝ Սիմիթեան շէնքեր
- \* Ա. Զառանկից Մանկանց եկեղեցի
- \* Հաճըն եւ Ռմէյլ Նախկին Փուռ Փատոյայի կից

Փոխադրակառքերը վերոնշեալ վայրերէն պիտի մեկնին ճիշդ երեկոյեան ժամը 6:00-ին եւ Ա. Պատարագի աւարտէն կէս ժամ տեղ՝ ժողովուրդը վերադարձնեն Պէրլուք:

**ԼԻԱՍԱՆԻ ԹԵՄԻ  
ԿՐՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

**ԱԶԴԱՐԱՐԱԳԻՐ-ԿՈՉՆԱԳԻՐ**

Մեծայարժ  
Պրն. Իշխան Ծինպաշեան

Յարգելի՛ պարոն,  
Լիբանանի Հայոց Թեմի Դատաստանական խորհուրդու, 15 Մայիս 2015 թուականին տեղի ունեցած իր նիստին, որուն ներկայ գտնուեցաք, զբաղեցաւ ձեր ընտանեկան հարցով:

Սոյն ազդարարագիրով ձեզ կը հրաւիրենք Դատաստանական խորհուրդի նիստին, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 2 Հոկտեմբեր 2015-ի կէսօրէ ետք ժամը 1:30-ին, Պուրճ Քամուտի Ազգային առաջնորդարանին մէջ՝ պաշտպանելու համար ձեր դատը անձամբ կամ փոխարինող անձի միջոցով:

Չներկայանալու պարագային, ձեր բացակայութիւնը ներկայութեան համագոր պիտի նկատուի եւ արձակուի համապատասխան վճիռ:

**ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ  
ԼԻԱՍԱՆԻ ՀԱՅՈՑ**

**Our e-mail addresses are:**

 [zartonkadl@gmail.com](mailto:zartonkadl@gmail.com)

 [zartonkdaily@yahoo.com](mailto:zartonkdaily@yahoo.com)

website: [www.zartonkdaily.com](http://www.zartonkdaily.com)

**«ԿԱՐՕ-ՏԻԳՐԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻԲԻՆ**

**GARO - DIKRAN**  
Flowers & Funeral Services



Յուղարկարութեան եւ ամէն առիթներու լաւագոյն սպասարկութիւն

Հասցէ. Պուրճ Քամուտ, Ա. Աստուածածնի եկեղեցւոյ փողոց:  
Հեռ. 01-254528, 03-892896  
e-mail: [garogarabedian@hotmail.com](mailto:garogarabedian@hotmail.com)

**Մ Ա Յ Ա Զ Դ**

Տեր եւ Տիկին Լեւոն եւ Վերա Նազարեան  
Տեր եւ Տիկին Արթուր եւ Թամար Նազարեան  
Տեր եւ Տիկին Յակոբ եւ Սոնիա Գրուշեան  
Տեր եւ Տիկին Ռաֆֆի եւ Վիքա Գրուշեան  
Տեր եւ Տիկին Կարի եւ Միշա Նազարեան եւ ընտանիք  
Տարաք Հայկ, Արթուր եւ Ալեքսիա Լեւոն Նազարեաններ  
Տարաք Ալեքս եւ Փիթր Արթուր Նազարեաններ  
Տեր եւ Տիկին Նուպար եւ Մարո Խանամիրեան  
Ողբ. Տիկ. Անգինէ Յովնանեանի ընտանիք  
Ողբ. Տիկ. Ալիս Գասապեանի ընտանիք  
Ողբ. Տարաք Վարուժ Խանամիրեանի ընտանիք  
եւ համայն Նազարեան, Խանամիրեան, Յովնանեան, Գասապեան, Գարակեօզեան, Գալայճեան, Պու Շոտի ընտանիքներ կը գումծն իրենց մօր, մեծ մօր, հօրաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

**ԱՐԵՂԱԶ ՆԱԶԱՐԵԱՆԻ**  
(Շնեալ Խանամիրեան)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 12 Օգոստոս 2015ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին իր բնակարանին մէջ:  
Յուղարկարութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 14 Օգոստոս 2015ին, կէսօրէ ետք ժամը 3:00ին Սուրբ Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, Չոքաք Էլ Պլաթ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆորըն Շպէի Ազգային գերեզմանատուն:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:  
Յաւակցութիւնները կ'ընդունուին Սուրբ Նշան եկեղեցւոյ «Կարպիս եւ Արեգ Նազարեան» սրահին մէջ, Շաբաթ, 15 Օգոստոսին ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:  
Շանթօք. Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել եկեղեցւոյ:

Այցելեցէ՛ք  
Կարդացէ՛ք  
Տարածեցէ՛ք



[www.RagMamoul.net-p](http://www.RagMamoul.net-p)

**ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է**

**Փրոֆ. Խոսրով Երամեանի**  
Twist OF Fate **تعبة القدر**  
Գիրքը  
Խմբագրութեամբ՝  
Շահէ Խաչեր Գալուստեանի

Ստանալ փափաքողները կրնան դիմել «Հարթօք»-ի խմբագրատուն, Թէքեան Կեդրոն, Ժըմէյզի  
Հեռ: 01/444 225  
Գին՝ 30\$



Պաշտպանութեան եւ ազատական սկզբունքներ, կը հաւատարմութեամբ բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Ինտելեքտուալ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպրդած վրիպակներու պարագային, կ'ապաւինին յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

**ԾԱՐՈՆԵՐ**